


ՆԱՄԱԿ ԳԻՆԵՄՈՒՆԵՐՈՒ ՄԵՂՔԻՆ ՄԱՍԻՆ

Եւ ո՛ր կարելի է այս աստիճան խելագար մը գտնել, որ չի գիտեր, թէ կոյրը գրկուած է արեւի յոյսէն: Եւ եթէ այս մէկը գրկանք է, պէտք է գիտնալ թէ որքա՛ն աւելի մեծ է գրկանքը եւ անպանելի է կուրուփիւնը անոնց, որոնց համար պարտաւորանքներու յոյսը խաւարած է եւ որոնք կռնակ դարձած են Սուրբ Գրոց ազդարարութիւններուն եւ որոնք չեն կրնար չարը բարիէն զանազանել եւ ոչ ալ միապարր մտածումներ ունենալ: Ըսելիքս հետեւեալն է. եթէ մէկը երկու թունաւոր օձերու հանդիպի ու խորհելով, որ անոնցմէ մէկը կրնայ թունաւոր ըլլալ՝ փախչի անկէ ու աներկիւղ կերպով երկրորդին մօտենայ, արդեօք երկրորդը սարսափելի մահով մը պիտի չմեռցնէ՞ զինք, քանի որ միեւնոյն վնասակար եւ մահացու թոյնը ունի: Նոյնն է պարագան անոնց, որոնք պարտաւորանքներն մէկուն կը հնազանդին եւ երկիւղածութեամբ կը պահեն զայն, սակայն կ'անարգեն եւ կ'արհամարհեն անոր նմանող ուրիշ պարտաւորան մը, որուն համար չափազանց խղճալի կերպով կորուստի կը մատնուին: Ահաւասիկ, թէ ինչո՞ւ անոնք կորուստի կը մատնուին: Մենք սորվեցանք Պօղոսէն, բայց մանաւանդ Քրիստոսէն, որ կ'ըսէ. «Գողերը, պոռնիկները, զինեմոյնները եւ բամբաստողները Աստուծոյ արքայութիւնը պիտի չժառանգեն...»

(Ճաշեր Յովհան Մանդակունի)


ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԱՏԱՐԱԳԻ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ 2.- Պատրաստութիւն ընծաներուն Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱՌԱՏԱՅԵԱԼՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Հոգեմորոգ այս սրբազան պահուն մէջ՝ պատարագիչ քահանան իր սրտաբոլիս աղերսանքը Աստուծոյ ուղղելով կը բարձրացնէ Սկիհը: Աստուածորդին է, որ վերստին կը բարձրանայ դէպի Գողգոթա, կը բարձրանայ՝ որպէս Գառն Աստուծոյ, որպէսզի զոհ եւ պատարագ՝ իր Մարմնի զենմամբ եւ Արեան հեղումով այրելու մարդոց մեղքերուն պարտամտրիակը:

Աստուածորդին արդարօրէն կ'ընծայէ եւ կ'ընծայուի: Որպէս Քահանայապետ՝ Ինքն է, որ կը պատարագէ, Ինքն է որ կ'ընծայէ զոհը՝ Ս. Պատարագը, բայց միանգամայն ինքզինքն է, որ կ'ընծայէ զոհը՝ Ս. Պատարագը, բայց միանգամայն ինքզինքն է, որ կ'ընծայէ Աստուծոյ՝ որդիական աներկբայ սիրով եւ հաւատքով: Պատարագողն ու Պատարագուողը Աստուածորդոյն լոյս կերպարին մէջ կը նոյնանան, որուն գեղեցկագոյն վկայութիւնը՝ պատարագիչ քահանային հետեւեալ խօսքերն են...
Շարունակելի



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՄ ՈՅՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԸԱԽԻՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119.105)

ԺԷ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 25 ՕԳՈՍՏՈՍ 2024 ԹԻՒ 34

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՃՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ Առ. 11.30-12.4: Զք. 2.10-13: Բ. Կր. 6.16-7.1: Ղկ. 1.39-56

ՎԵՐԱՓՈԽՄԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱՃՆԱՅ ՏՕՆ ՑԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍ 1. 39-56

Նոյն օրերուն, Մարիամ ճամբայ ելլելով՝ աճապարանքով զնաց Յուդայի լեռնային շրջանի քաղաքներէն մէկը: Հոն Չաքարիայի տունը մտնելով՝ Եղիսաբէթի ողջոյն տուաւ: Երբ Եղիսաբէթ Մարիամի ողջոյնը լսեց, իր որովայնին մէջ երեխան շարժեցաւ, եւ Եղիսաբէթ Սուրբ Հոգիով ներշնչուած՝ բարձրաձայն ըսաւ. «Կիներուն մէջ օրհնեալ ես դուն եւ օրհնեալ է զաւակը, որ կը կրես որովայնիդ մէջ: Ի՛նչ երջանկութիւն, որ Տիրոջս մայրը ինձի կ'այցելէ, որովհետեւ երբ ողջոյնդ լսեցի, երեխաս ուրախութեամբ շարժեցաւ որովայնիս մէջ: Երանի՛ք թեզի, որ հաւատացիր, որովհետեւ Աստուծոյ կողմէ թեզի ըստածները պիտի կատարուին»:

Մարիամ ըսաւ. «Տէրը պիտի գովաբանեն: Ահա հոգիս կ'ուրախանայ Աստուծոյ, իմ Փրկիչովս, որովհետեւ ան տեսաւ իր աղախինին հեգութիւնը: Ասկէ ետք բոլոր սերունդները երանի պիտի տան ինձի, քանի հզօրն Աստուած ինձի համար մեծամեծ գործեր կատարեց: Սուրբ է անունը անոր: Բոլոր ժամանակներուն մէջ ողորմութեամբ ան կը նայի աստուածավախ մարդոց վրայ: Իր բազուկով ան զօրութիւն ցոյց տուաւ, ոչնչացուց հայարտները՝ իրենց բոլոր խորհուրդներով: Գահազրկեց արքաները եւ բարձրացուց խոնարհները: Անօթիները բարիքներով լիացուց, մինչ հարուստները դատարկաձեռն արձակեց: Պաշտպան եղաւ իր ծառային՝ Իսրայէլի, հաւատարիմ մնալով իր ողորմութեան, ինչպէս որ (խոստացած էր մեր հայրերուն՝ Աբրահամի եւ անոր զաւակներուն):

(Մարիամ Եղիսաբէթի մօտ շուրջ երեք ամիս մնալէ ետք վերադարձաւ իր տունը):

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

Ա. ՅՈՎԱԿԻՄԻ ԵՒ ԱՆՆԱՅԻ

Յովակիմ եւ Աննա, պանծալի եւ գովելի, մարդացեալ հրեշտակներ են եւ պարծանք մաղկային ազգին: Անոնք Աստուծոյ կողմէ ընտրուեցան ծնողքը ըլլալու Աստուածորդիին ծնողքին, եւ իրական նախահայրը եւ նախամայրը տիեզերքի Փրկիչին:

Աստուած ուզեց, որ նախ Յովակիմ եւ Աննա անգաւակ մնան՝ որպէսզի ծերութեան եւ ամուսնու մէջ հրաշագործէ անոնց հրաշալի գաւակ մը՝ սահմանուած իր Միածինը ծնելու:

Յովակիմ եւ Աննա բարեպաշտ, հաւատացեալ եւ միշտ Աստուծոյ ապաւինելով կ'աղօթէին: Օր մը աղօթքի առնելու Աստուծոյ հրեշտակը երեւցաւ Աննային եւ ըսաւ. «Աննա՛, Աննա՛, Աստուած լսեց քու աղօթքդ, եւ ահա պիտի յղանաս եւ պիտի ծնանիս մանուկ մը, եւ անոր անունը պիտի տարածուի համայն երկրի վրայ»:

Աննա ըսաւ. «Կենդանի է իմ Տէր Աստուածս: Եթէ գաւակ մը ծնանիմ, գայն Աստուծոյ պիտի ընծայեմ Սամուէլի մօր՝ Աննային նման եւ իմ գաւակս ալ Աստուծոյ տանարին պաշտօնեայ պիտի ըլլայ իր կեանքի բոլոր օրերուն»:

Աստուծոյ հրեշտակը անոր ամուսինին ֆով ալ իջաւ եւ ըսաւ անոր. «Յովակիմ՛, Աստուած լսեց քու աղօթքդ: Գնա՛ տունդ: Քու կինդ Աննա պիտի յղանայ, եւ ձեզի եւ ամբողջ երկրին ցնծութիւն պիտի ըլլայ»:

Երբ լրացան օրերը, շնորհանունն Աննա ծնաւ իր մանուկը՝ շնորհալի դուստրը եւ անունը կոչեց Մարիամ, որ կը նշանակէ բարձրութիւն, տիրութիւն, լուսապայծառ, աստղ ծովու, եւայլն, որոնք լաւ կը յարմարին մեր տիրամօր:

Երբ մանուկը երեք տարեկան եղաւ, Յովակիմ եւ Աննա առին Մարիամը եւ տարին Տիրոջ տանարը եւ ընծայեցին Աստուծոյ՝ ըստ իրենց ուխտին, եւ դրին զինք Աստուծոյ պաշտամունքին մէջ՝ ուրիշ կուսաններու հետ, որոնք կը բնակէին տաճարի կուսաստանին մէջ ըստ աւանդութեան, Փանուէլի դուստրին՝ Աննա մարգարէի դաստիարակութեան տակ:

Բայց քանի որ կոյսին տարիքը բաւարար չէր ուրիշներու հետ բնակելու համար, քահանայապետը ծնողքին ըսաւ՝ որ տանին տունը եւ անբծութեամբ պահեն, եւ երբ եօթը տարեկան ըլլայ՝ բերեն եւ դնեն նոյն կուսանոցին մէջ: Եւ այնպէս ըրին:

Այնուհետեւ Մարիամ որպէս հողեղէն Սերովքէ, եօթը տարի եւս ապրեցաւ կուսաններուն հետ եւ ապա, ըստ Աստուծոյ տնօրինութեան, նշանուեցաւ Յովսէփ արդարի հետ եւ տասնհինգ տարեկանին ծնաւ անարատ կուսութեամբ աշխարհի Փրկիչը, Յիսուս՝ որդի Աստուծոյ:

Իսկ Աստուածածինի ծնողքը՝ Յովակիմ եւ Աննա, խոր ծերութեան մէջ կանչուեցան առ Աստուած:

Սովորական կարծիքը այն է, թէ Յովակիմ Աննայէն առաջ վախճանեցաւ, եւ Աննա արժանի եղաւ տեսնելու թողը՝ Յիսուս Քրիստոս աստուածորդին մարմնապէս, եւ Փրկչի մանկութեան օրերուն վախճանեցաւ եւ թաղուեցաւ իր ամուսինին գերեզմանը՝ Գեթսեմանիի ձորին մէջ:

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

ՄԱՐԻԱՄ ՄԱՅՐՆ Է ԲՈՒՈՐԻՆ՝ ԵՐԿՐՆՔԻ ԵՒ ԵՐԿՐԻ

Երանելի է Աստուածամայրը, որովհետեւ ան մաս կազմեց ամենասուրբ Երրորդութեան Ընտանիքին: Ան եղաւ դուստրը Հայր Աստուծոյ, մայրը Որդի Աստուծոյ եւ Հարսը Սուրբ Հոգի Աստուծոյ: Երանելի է սուրբ Կոյսը, որովհետեւ ան եղաւ մայրը՝ Փրկիչին ու փրկուածներուն, մայրը՝ սրբութեան, սուրբերուն եւ սրբութեան ձգտողներուն, մայրը՝ քերովքներուն եւ սերովքներուն, մայրը՝ հրեշտակապետներուն, հրեշտակներուն եւ հրեշտականալ ուզողներուն, մայրը՝ պատմութեան բոլոր արդարներուն եւ նահատակներուն, մայրը՝ մարգարէներուն եւ առաքեալներուն, մայրը՝ Յաղթական եւ Ջինուորագրեալ Եկեղեցիներուն:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ

ՀՈԳԵՒՈՐ ՂԱՍԸ

Ան նաեւ մեր մայրն է, եթէ երբեք Քրիստոսով հաշտուած ենք մեր Երկնաւոր Հօր հետ: Մայրն է բոլոր տառապեալներուն, նեղեալներուն, որբերուն եւ որբեւայրիներուն: Եթէ ունիս նեղութիւններ, դիր զանոնք հաւատքով սուրբ Մօրդ ոտքին տակ եւ վստահ եղիր, որ ան պիտի հոգայ:

ՏԵՐ ԳԹԱ՝ ՄԵՐ ՀՈԳԵՒԵՐՈՒՄ

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ ՔՈՒ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՐԸ Կ՛ՊՐՈՒՂՑ ԸՍՏՈՒԾՈՅ ՍԵՐԸ ՆԵՐԲՈՂԵԼ, ԿԱՐԴԱ՛Վ՝ ՍՍ.ՂՄՈՍ 57

Ողորմէ՛ ինձի, ո՛վ Աստուած, ողորմէ՛ ինձի, որովհետեւ քեզի՛ ապաւինեցայ. մու թեւերուդ հովանիին տակ պիտի ապաստանիմ, մինչեւ անցնի պատուհասը: Բարձեալ Աստուած կ'աղաղակեմ Աստուծոյ, որ իր օգնութիւնը կը դրկէ ինձի: Երկինքէն օգնութիւն կը դրկէ եւ կը փրկէ զիս, եւ կը նախատէ անոնք՝ որոնք կեանքիս կը սպառնան:

Աստուած իր սէրը եւ իր ահաւատարմութիւնը ցոյց կու տայ ինձի:

Ես գազաններու մէջ մնացեմ եմ, մարդոց մէջ՝ որոնք կրակ կը ժայթքեն. նիզակի եւ նետերու պէս ցցած են իրենց ակոսները եւ սրածայր սուրբերու պէս՝ իրենց լեզուները:

Երկինքներէն գերիվեր ես դուն, ո՛վ Աստուած, թող քու փառքդ ամբողջ երկրի վրայ հաստատուի: Զիս որսալու համար ոտքերուս առջեւ ցանցեր փոստեցին, իմ դիմացս գուրբեր փորեցին. բայց իրենք ինկան անոր մէջ:

Սիրտս պատրաստ է, ո՛վ Աստուած, սիրտս պատրաստ է քեզ՝ քեզիս եւ նուազով ներբողելու:

Արթնցի՛ր, ո՛վ իմ անձս, ելե՛ք տաւիղ ու ֆնար, ես արթուն պիտի դիմաւորեմ առաւօտը: Ազգերուն մէջ պիտի գովեմ քեզ, Տէ՛ր, ժողովուրդներուն մէջ պիտի ներբողեմ քեզ

Շարունակել Աաղմոսագիրքէն